

Տիկնայք և տիարք.

Վերլուծությունը պիտի ընեմ գործի մը, որ գրեթե երկու ամիսն ի վեր կզբաղեցնե կովկասահայ թատերական և գրական շրջանները. ու հոն, կովկասի մեջ, հակառակ գրական դատավարության ժխտական արդյունքին, ամեն ոք, հազվադեպ բացառություններե զատ, համաձայն է գովելու Շանթի գործին գեղարվեստական մեծ արժեքը:

Կարծեմ որ գրական գործի մը դատով մտտենալու ձևն անհարմար է, ինչպես՝ անարդար, որովհետև դատ մը արագություն կպահանջե, մինչ Շանթի հայ գրականության հանդեպ... գործած ոճիրը այնքան ստիպողական չի դարձներ նման ձեռնարկ մը, հետո, դատի մը ելքը զայն վարող փաստարաններու հմտութենեն, պերճախոսի ձիրքերեն, փաստելու, համոզելու, հուզելու կարողութենեն կախում ունի: Այդ հատկություններով ոժտված մը կրնա ոճիրը մեղմել, արդարացնել կամ արդարը կորուստի մատնել: Ինչպես կտեսնվի դատավարության մը մեջ, հակառակ արդարության գաղափարին, անարդարության մը բոլոր սարյները կան և ճիշտ այդպես պատահեցավ կովկասի մեջ Շանթի գործին համար ալ. հոն ամբաստանող կողմը՝ ի զեն ամեն բանի ամբաստանեց, այդ էր իր պաշտոնը և պաշտպանողներու տկարութենեն օգտվելով՝ դատին եզրակացությանք վրա մեծապես ազդեց:

Հոս, ազնիվ ներկաներ, ինչպես նախապես ըսի, ես գործին վերլուծությանը պիտի ձեռնարկեմ՝ պարզելով տեսակետներս, զնահատելով և քննադատելով հավասարապես, նաև անդրադառնալով ՀԻՆ ԱՍՏՎԱՍՆԵՐՈՒՄԻ մասին եղած քննադատությանց և տեսակետերու:

Բայց նախ այդ բոլորը. կարծեմ թույլատու պիտի ըլլաք, որ քանի մը հակիրճ խոսքերով գործին նյութը ներկայացնեմ, հուսալով հանդերձ թե ամենքդ ալ ծանոթ եք անոր, բայց նաև հուսալով, որ կան ոմանք որ առիթը չեն ունեցած զայն վերժանելու:

Սևան կղզին համանուն լճին մեջ կգտնվի՝ Հայաստանի հյուսիս-արեւմելյան կողմը, հոն հիմա ալ ուխտատեղի մը կա: Հազար տարի մը առաջ

յոթնամեակի պետք է՝ եղեւթյան ներկա ըլլալու համար: Նույն ատեն կողմույն մենաստանին մեջ կայրին վանահայրը, Արեղան, Կույրը, նաև կարգ մը միաբաններ՝ աղոթքի և ինքնազրկման մեջ՝ արհամարհելով կյանքը, որ ծովակեն անդին կվարեն մարդկային զանգվածները: Վանքը մտտ օրեն պիտի ունենա իր հոյաշեն եկեղեցին՝ արդյունք իշխանուհվո մը երկյուղած նվիրվածութեան և վանահոր տեսլապաշտ խանդին: Իշխանուհին կրնակի լճակին հանդիպակաց եզրը:

Պատահար մը կխտովե վանքին խաղաղ մթնոլորտը և զնառկան կըլլա Արեղային համար: Իշխանուհվույն իշխան եղբայրը և անոր աղօթիկը, Սեդան, լաստով մը վանք կուզան նորաշեն ժամբ տեսնելու: Բայց շրջ-թայազերծ մրրիկ մը ծովը կողեւորե, այիքները տաշեզի մը նման լաստը կպատօցնեն ու Սեդան կխշեն: Արեղան, որ լաստին մեջ է, կնետվի մըրրկածուքի ալջաց մեջ ու կազատե զարմուհին...

Հոս եղերեքութեանը կակախ: Արեղան՝ վանահոր մտածմանց և անհաստատութիւնը ներշնչումներուն նեցուկը, ընկերը, ճակատադրական սիրտ մը մեջ կիջնա: Զգացումներու հակադրութենեն կտառապի ան, բայց չի կրնար Յեղային վրա սեւեռել զատրիլ, ընդհակառակն, աշխարհիկ սիրտ տեսիլներով կխելացնորի ու իր թշվառ սերը կուռնանա: Նախ Սեդան կտեսնե անպանաւջն, գեղանի, հերարձակ, հետո կողմույն վրա պտույտի մը միջոցին հեթանոսութեան հին քզիները, պարիկները, միգանուշները կըրջապատեն զինք, կխոսին իր հետ. հրապուրիչ են և շնորհագեղ... Սրբ անոնցմե կազատի, ահա կտեսնե վաղեմի և ծերունի ճգնաժող մը՝ մթին փոսի մը եզրը կանգնած...

Արեղային մտամտլոր վիճակը չի վրիպեր զինք շրջապատողներին. Կույրը լավ կհասկնա իրադարձութիւնը. վանահայրը զարմացում օւնի միայն...

Վերջին փորձութեան տեսիլն է աս: Արեղան մատուտի մեջ կաղաթե. հանկարծ անպարտելիորեն շլացուցիչ լույսեր կծաթին. հեթանոսական վաղեմի, շենշող, հրճական խնջույքն է ի պատիվ վահագնին, Աստղիկին: Կուզան մարտիկները արշավանքի մը հաղթական. կուզան կիներ շքեղ, կենսաուսույզ, փոքրիկ ավազաններու մեջեն ոսկյա թասերով կըմպեն բոսոր գինին, մինչ անոթներու հնչական ծիծաղը երգերու կընդխառնի: Կյանքի տունն է աս, պայքարիներ անդուլ, անողոր պայքարիներ հաղթութեան և հետեւաբար՝ վայելքին: Արեղան կուզե մասնակցիլ անոր. կմերժվի, բայց աստիճան մը հետո կըրազմի կոշնակներուն մեջ: Կմարի հանկարծ այս շքեղանքը. խորանին առաջ, գետնաթափալ և զգայազիբի Արեղան կփոխադրեն սենյակ: Ալ վճալած է, Արեղան չի կրնար տակալ ալս մենութեան և երաշտի վացրերուն մեջ հառնող անսուրբ, սակայն թաղցր սիրտ հազար

երազներուն, կառաջանա գեպի ծով. Սեզան կկանչե զինք, ու անոր կապույտ ալիքներուն կհանձնե իր բեկյալ մարմինը...

Վանահայրը պարապ չէ անգին: Ան ալ իր տառապանքն ունի: Կկարծեր աշխարհիկ մտածումն անգամ ու անաղարտ բարձրագույն խորհրդով մը կանգնած ըլլալ նորաշին եկեղեցին, մինչ ջահախնդիր, մարդկային սիրտ մը արդյունք է եղած. այս եղրակացութեան կհասնի իշխանուհւոյն հետ մեկ-երկու տեսակցութենէն ետք: Երբեմն սիրած էին զիրար. բախտը մերժած էր իրենց միութիւնը. վանահայրը կուսակրոն դարձեր էր, իշխանուհին ամուսնացեր, զաւակներու տեր, բայց հիմա իր ծերութեան օրերուն եկած է վանքին դեմ բնակիլ՝ խորհելու համար իր նախկին սիրահարին վրա և հրճելու իրենց սիրույն պատուը եղող եկեղեցւոյն հետ: Վոր սիւնեթով...

Ու մինչ մտա օրնն տաճարին հանդիսավոր բացումը պիտի կատարվի, վանահայրը կորոշե և միջոցներ ձեռք կառնե զայն հիմնահատակ քահելու...

Ահա, տիկնայք և տիարք, «Հին աստվածներու» նյութը համառոտակի: Կարծե վայրկեան մը կանգ առնե՞ք՝ քննելու համար այն զանազան մեկնութիւնները, որոնք ի հայտ եկան Շանթի գործին մասին զանազաններու կողմէ:

Ոմանք պատմական գործ մը կնկատեն զայն. ալիքորդ է ըսել, թե այնպէս չէ. հոն ոչ պատմական շրջան, ոչ պատմական անձնավորութիւններ կան, շիկա նաեւ ասանկ շրջաններու հասակ բարացուցական նկարագիր:

Կըսվի թե քրիստոնեակեան և հեթանոսութեան անհաշտ պայքարն է: Մեծապէս տարակուսելի է այս հեռանկարնն ալ: Հեղինակն ինչո՞ւ հարա տարի մը հեռանար այդ պայքարին սասակագույն և արհաւիրալի շրջաննն՝ զայն համար անանկ ասեն մը, երբ հեթանոսական ամեն բան մարած էր, ու քրիստոնեակեան իր հաղթութիւնը կորոշեր հին կրօնին ալիքակաց վրա:

Ավելի հաւասար լուծման մը պիտի հակեր այն մեկնութեանը, որ կը պնդե թե «Հին աստվածները» վանական և աշխարհիկ կյանքին կռիվն է, ասիկա երևութապէս և կարծիքն է անոնց, որոնք այս symbolique գործին կեղևին հարած են միայն:

Տիարք և տիկնայք, եթե թույլ տրվի ինձ արտահայտվիլ՝ ես կովկասահայ քննադատ կըրչ. Ղազարյանի հետ համաձայն եմ ըսելու, թե այդ գործը մտքին ու արտին հալերժական կռիվք կխորհրդանշե, այսինքն մտածման և զգացման:

Եիշտ է, մենաստանի մը մեզ անդի կուենետ եղելութեանը, և թե այն-

տեղ գործողները կղերականներ են, բայց ամեն ինչ խորհրդանշան է հոն, խորհրդանշան՝ Վանահայրը, Արեղան, Կույրը, նորաշեն Սկեղեցին, Մովսիս:

Վանահայրն անշահախնդիր վերլուծման և հսամերժ մտածման նվիրված մարդկութունն է կամ և որ նույնն է՝ միտքը, որ կուզի ազատիլ մեզ ապականող, կաշկանդող զգացումներին, բարձրանալ բնազդներին, որոնց սարուկ գերեվարներն են՝ մարդը, համայնքները և ազգերը: Ու Վանահայրը կըսե Արեղային. «Դուն նայե երկինք, որդի, երկինքը միտքն է բնության. խոր ու խաղաղ»:

Հրաշալի շէ՞ ատիկա, այո՛, երկինքը իր հազար բյուր լուսավորներով, մոլորակներով արեգակնային դրության մաթեմատիկական ճշտությամբ ոլորվող շարժումներով այնքան լավ կրնա բարձրագույն և անխարդախ ճշմարտության տենչացող միտքը բնորոշել:

Հետո վսեմ և վճռական թուպի մը մեջ լսեցեք Վանահայրը կրկին, երբ իր ստորագասներուն երեսը կնետե.

«Դո՞ւք հոս իմ շուրջս, ես... հոս կեցած ձեր մեջը... ես ձեր վանահայրը, դուք իմ միաբանությունս, իմ իսկ հիմնած (ժպտուն) Միաբանությո՛ւն. ի՞նչ միություն ձեր և իմ մեջ... (աչքերը շփելով): Կարծես կապը կիչնա աչքերես: Ինչպես է եղեր, որ ես շեմ հասկցեր այսքան պարզ բանը, այսքան ակնհայտնի: Մինչև հոս, մինչև անապատ կրցեր ենք գալ մենք միասին: Մինչև հոս ես կրնայի բերել ձեզի, մինչև հոս կարելի է բերել մարդը, բայց հոսկե անդին... Հոսկե անդին մարդ ինքը պիտի երթա: Ճշմարիտը դուք եք: Այդ եկեղեցին պետք է, որ նա մնա, ան է ձեր եկեղեցին, գացեք, գացեք ներս, ան կուտա ձեզի անվերջ աղոթքներ ու մխիթարանք, ան կրանա ձեզի արքայության դոները, կազատե բոլոր սատանաներեն, ան ձեզի հացն ալ կուտա ու ձեր հանգիստը, գացեք, գացեք ներս, ու խաղաղություն թող ըլլա ձեզի հետ: Իսկ իմ փնտրածս ատիկա շէ. իմ փնտրածս աշխատանքն է, ներքին անդու ու անկաշկանդ որոնումը, ներքին անվերջ նվաճումները բարձունքե բարձունք, պարիսպ պարիսպ, տարակույսներու անդունդներու վրայեն, ելքերով ու անկումներով, անդադար խոյանք մը դեպի վերինը, տաժանակիր աշխատանք մը դեպի ճշմարտությունը: Գացեք, գացեք ներս դուք ձեր եկեղեցին, ես ալ երթամ իմ եկեղեցին, ես ալ, բայց այս անգամը ես, միայն ես. և կերտվածք մը, որ վայել ըլլա իմ աստծու բնակությանը, որու կամարներու տակ իմ խնկելիք աղոթքին ոչ մեկ բառը կեղծ չէ հնչե, ոչ մեկ բառի արձագանքը դատարկ չի հնչե»:

Ի՞նչ կնշանակեն այս խոսքերը, անոնք հարակցություն ունի՞ն սովորական կրոնի մը խնդիրներուն հետ, և ի՞նչ է այդ անդու, անկաշկանդ ներքին որոնումը ճշմարտության. կրոնի արդեն իսկ հայտնագործված և անմերժելի ճշմարտությանց մեջ խո՞ւյզ մը: Ո՛չ, կտեսնվի թե վանական

և գրոնախան կյանքին դուրս ինդիր մը կհուզվի: Վանահոր կործանել ուզած եկեղեցին պարտված ճշմարտության մը ուրվանկարն է: Դարերու ընթացքին անկաշկանդ գիտական միտքը ի խույզ կելլե ճշմարտությանց, կկարծե երբեմն գտած ըլլալ զանոնք, բայց իր երջանկութիւնը կարճատև կըլլա, որովհետև կզգացվի շուտով անոնց շաղփաղփուն էութիւնը: Աւանահորն նույն աշխատութիւնը, նույն տքնութիւնը գերագույն ճշմարտությանց, ատով ամեն մտքի մարդ իր եկեղեցիները կթայթայե և կշինե. այսպէս կընթանա կյանքը հարատև:

Վանահայրը քայքայեց իր եկեղեցին, որովհետև ան իր անպարտելիորեն իտեալիսթ, տեսչական հոգվույն գոհացում մը չէր կրնար տալ՝ ունենալով իր մեջ զգացման հզոր երակ մը, իշխանուհվույն սիրո քաժիներ... Կործանելով այնքան ջանքով շինած եկեղեցին՝ Վանահայրը պարտված մը չէ...

Իսկ Արեղան՝ անիկա մարդկային մեծագույն զանգվածները վարող բնազդներուն, զգացմանց խորհրդանշանն է: Արդարև, մեր մեջ տակավին կտիրապետե Logique allective (բնազդային տրամաբանութիւն), ինչպես պիտի ըսեր Կյուսթավ Լը Պոն, մինչ Logique ratiorelle-ը (բանականութիւնը) տկար է մեծապես: Ավելի զգացումներով կապրինք, կգործենք, կուղղենք մեր համակրանաց, հրճվանքի և տխրական վիճակներու քայլերը, քան վերլուծական մտածմամբ: Շատ անգամ, երբ մտածումը կթելադրե մեզի ուղիղ ճամբան, բանական ուղին, ու մենք կհուսանք, կորոշենք հետևել իրեն, հանկարծ բուն ուսումով մը զգացման կոհակը կծայթքի, կանգոսնե բանականութեան ձայնը, կխեղդե զայն ու կվարե մեզ, ինչպես մորիկը շյուղ մը...

Թերևս այդ անբացատրելի զգացումները հնավուրց մարդ-անասունեն մեզ անցած առհավական բնազդներեն են, զորս բյուրավոր դարերու քարեշրջութիւնն իսկ չի հաշողած գիտակցութեան կայծով լուսավորել...

Արեմն մանուկ մըն է մտածումը, մինչ տակավին թիկնեղ և ջլապինդ հսկա մը՝ զգացումը: Երկուքն ալ, սակայն, մանուկը և հսկան, անպարտելի են: Այսպէս ալ ներկայացուցած է հեղինակը:

Առ իրավ «Շին աստվածները» տարբեր լուծում չի տար:

Մինչ Արեղան ծովուն կհանձնե ինքզինք, որովհետև «ծովը սիրտն է բնութեան», այսինքն զգացման աշխարհը, անոր պես արտաքին տարբերու ազդեցութեան տակ կատողող, մոնշող, ողորթող, շողորթթ, անդին Վանահայրը նորեն քակել կորոշե Եկեղեցին:

Կտեսնվի որ, կկրկնեմ, պարտվող շիկա: Կյանքն է անկաշկանդ և լուսավոր մտածմամբ, կյանքը բեռնավոր՝ մթին, առեղծվածային զգացումներով, որ կհավիտենանա, և մարդ այդ երկու զգացումներուն մեջ կտվայտի, կհրճվի ու իր վախճանին կդիմե:

Ճակատագրական ողբերգություն մը չէ՞ այս...

Մինչ հոս հեղինակն առարկայական է, կներկայացնե ինչ որ կա մեր առջև՝ իբր բիրտ իրականություն, բայց ան ենթակայական ալ կըլլա ու իր իմաստասիրութենե բան մը կխառնե գործին մեջ:

Կհիշեք, ազնիվ հանդիսականներ, ըսի թե Արեղան իր սիրատենչ լատույտներուն մեջ կհանդիպեր ճգնաժող մը ուրվականին՝ փոսի մը գլուխ կանգնած: Թող խոսի այդ ճգնաժողը՝ Արեղային հորանջող, գեշ պարապը ցուցանելով:

«Ա՛, առիկա է, առիկա ունայնություններուն ունայնությունը: Փորեր եմ, փորեր, նայե՛ այս եղունգներովս, ուղեղովս ու սրտովս, փորեր եմ անընդհատ, ծնած օրես վերջին վայրկյանը, փորեր եմ ու որոներ տակեն բան մը գտնելու համար, կարևոր բան մը, հիմա ալ կպահպանեմ, որովհետև իմ փորածս է, միակ բանը, որ իմս է, իմ ստեղծածս: Միակ բանը, այ, այդ փոսը, այդ դատարկ փոսը, այդ միշտ դատարկ փոսը, որ ինչքան փորես, այնքան ավելի դատարկ կդառնա: Դատարկ, դատարկ, կհասկընա՞ս, որ երբեք, երբեք չէ լեցվելու ոչնչով: Գնա՛, գո՛ւն ալ գնա փորեքու փոսդ ու թող իմինս ինձի»:

Քիչ մը անդին կհասկցվի, որ այս ճգնաժողը եկեր է կյանքի գլխավոր հանգրվաններեն, եղեր է իշխող, հետո՛ քարոզիչ, հետո՛ միաբան և ի՞նչ թշվառ եզրակացություն կհանգի ի վերջո:

Կյանքը՝ զգացման թե մտածման, ուրիշ բան մը չէ, եթե ոչ պատրաստություն մը անհույս վախճանի մը: Ըվ եթե այդ փոսը սիրո կամ կյանքի երազովն իսկ լեցվի, մենք կանգնած ենք կրկին այդ անհույսության անդունդին վրա...

Ահա Շանթին կյանքի մասին ունեցած ըմբռնումը: Ճիշտ թե սխալ, ամեն մարդ զայն իր հաճատքին համեմատ կրեա քննության ենթարկել և դատել: Միայն թե մի մտռնաք, ազնիվ ունեկնդիրներ, որ գեղարվեստական գործի մը առջև կգտնվիք և ոչ թե ընկերային բարոյականությունը զբաղվող երկասիրությամբ մը...

Արշ. Հարությունյան, մին Շանթի դատական գործի քննադատողներին, «Հին աստվածներն» անարժեք, անիմաստ, և վնասակար կգտնե, օրովհետև հոն tendance չիկա, օրովհետև հեղինակը սանձարձակ կենսապայքար կքարոզե, օրովհետև կմերժե բարոյական մեծ հաղթանակներուն տանող խեղալը: Այս տեսակետներն ինքնին կըքանան՝ իմ հայեցակետես նայելով գործին:

Ի՞նչ կեշանակե արվեստի գործին մեջ անպատճառ փնտրել զայն, զոր դեռ չէ փափագեր հեղինակը: Արվեստի գործը պիտի դատվի ինքն իր մեջ, չէ թե մեր ձգտումներուն, հաճատամքին համեմատ: Այդպես դատելով



Մարդկային մտքի էն շքեղ արտադրութիւնց մեծագուն մասը կփճանան Գատեցեք այդպես, եթէ կրնաք Սոփոքի էտիփը, որ ահեղ ճակատագրականութեամբ հորը վճարված ոճիրը անիրավ դատաստանով մը կհասցունեն մինչև անոր դեռատի աղջիկներուն. դատեցեք Շերսփիրը, որ հաճախ ապերախութեամբ, փառքի տենչն ու ոճիրը, հիմարութիւնն ու գծուծ շահասիրութիւնը, և նախանձը կհուզի իր մօայլ ու խորախորհուրդ էջերուն մեջ, դատապարտեցեք կյոթեն, որ «Ճառատի» մեջ մարդկային թարթափումներուն, թափառումներուն նորախնդրութեան անհուսութիւնը կըխորհրդանշի թերևս. հետո նետեցեք ձեր արհամարհանքը Իպսենին, որ հուսարով հանդերձ ճշմարտութեան թաղափորութեան և աննախապաշարատուց, մաքուր անհատներով ընկերութեան մը կարելիութեան իր վերջին գործերեն մեկուն՝ Երևվածալետ Խունեսը՝ մեջ ընկերութեան նախապաշարումներեն և ախարութենեն վեր բարձրացող անհատը կթափախի աշտարակին բարձունքեն վար՝ սե մայթերուն վրա ցրվելու համար անոր խոհուն ուղեղը...

Ո՛ր, գեղարվեստական գործեն ստեղծագործ ուժ մը կպահանջվի միայն, երբ անիկա մեզ կհուզէ. խորհելու կմղի և կհոհացնէ մեր գեղարվեստական զգացումը, այդ արդեն իր հաշողութեան էն մեծագուն գրավականն է...

Մամբրե Մատենչյան, Շանթի դատին մյուս քննադատը. Հին աստվածները արդեն իսկ մեռած գործ մը կհամարի, իբր գեղարվեստական արտահայտութիւն, որովհետև անոր մեջ չիկա տրամատիք ընդլայնում, հոգեբանական աստիճանական զարգացում, որ վերջնական լուծումին առաջնորդեր տիպարները և վերջապես չիկա ուսումնասիրված տիպարներ.

Գործը, ազնիվ տիկնայք և տիարք, առեկով իբր սովորական տրամ մը, կրնար այդ տեսակետով դատապարտվի, բայց իբրև սիմպոլիք էջ՝ շինարար այդ պայմաններուն տակ. Տիպարներեն երկուքը՝ Վանահայրն ու Աբեղան, շատ որոշ բարացուցական գիծեր չէին կրնար ունենալ, որովհետև իրենք մարդկութիւնը կխորհրդանշեն հոն և եթէ հակառակ այդ ամենուն Հին աստվածներուն մեջ մեր հետաքրքրութիւնը հարածուն է, որովհետև հեղինակը գիտցած է լալագուն ներշնչումով մը Աբեղային հոգեբանութիւնը զարգացնել խոռվիչ, շլացնող ու հետզհետի խտացող պատկերներու միջոցով, Իսկ եթէ սվելի տկար կերևի Վանահոր հոգեբանութիւնը, որովհետև անիկա ալելի ներքնահայաց խորհուրդով, քան արտահայտ բառերով ու շարժումով կհասունցնէ ինքզինք...

Ազնիվ հանդիսականք, շեմ ուզեր երկարաբան ըլլալ՝ անդրադառնալով երկրորդական տիպարներուն վրա, բայց շեմ կրնար քանի մը խոսք ըսելիս գրկել ինքզինքս Շանթի լեզվին ժասին:

Լեզուներու զարգացման օրենքը ծանոթ է ձեզի. երկրի մը մեջ բազմաթիվ գավառաբարբառներեն մին կուգա օր մը, երբ կսկսի տիրապետել մյուսներուն վրա և ի վերջո դառնալ տեսակ մը պաշտոնական լեզու։ Ասանկ եղավ Տրանսայի մեջ իւր տը ֆրանսի լեզվին համար, այսպես Գերմանիո մեջ Հարավային գերմաներենին համար, այսպես ուրիշ երկիրներու, այսպես և հին հայերենին ու նոր հայերենին համար։ Ինչո՞ւ բարբառի մը այս գերակշռութիւնը ուրիշ ցեղակից բարբառներուն վրա, որովհետև առաջինը իր մեջ կպարունակե մյուսներեն ավելի բան մը, ե իր կազմութիւնը կատարելութեան ավելի հարմար է։ Մենք քաղաքական դժբախտ բաժանմամբ ունեցանք արևելյան և արևմտյան աշխարհաբարբառող մը պարտի ընտրել լավագույնը կամ գոնե իր նախընտրածը։ Շանթ ոչ մին ընտրած է և ոչ ալ՝ մյուսը. երկուքը իրարու խառնելու ճիգ մը ունի ան, և ոչ միայն այդ, հապան կփոխե խոնարհման ձևեր, որովհետև գավառներու մեջ տեղ-տեղ այդ ձևով կարտահայտվին։

Եթե, տիկնայք և տիարք, ամեն գրող ըստ կամս նորօրինակ բան մը մտցնել լեզվին մեջ, ի՞նչ պիտի ըլլար այն ատեն մեր խեղճ հայերենը։ Մենք կտառապինք լեզվական միօրինակութեան մը պետքեն, ու ահա Շանթը կատեղծե, այո, յուրահատուկ, բայց անօրինակ լեզու մը, որ խնամված է, թերևս, բայց մյուս թերիներեն զատ սառն ու նախնական հոտ մըն ալ ունի. ինձ այնպես կթվի, թե տրամաթիք լեզվի թերութիւն մ'ալ կա այս գործին մեջ. լեզուն ոգվույն ճշմարիտ հագուստը չէ, թո՛ւրքը փոքր է, ավելի անիկա քնարական է, քան՝ ողբերգական, և արդեն Շանթը միշտ մեղմ հոգի մը եղած է՝ հովվերգութեամբ մը ինկած է գրական հողին վրա։ Արեղան իր մոայլ սիրույն մեջ և հիմարական յիշնելու, թե չի նկատու նոպաներուն ատեն, ուր Համլեթը պիտի հիշեցնէր՝ անթո՛ղ լեզու մը ունի. Վանահոր խոսքն ալ տարիներով մենութեան և խոհանքի լեղին ըմպած մարգարեական կոչը չէ, ինչպես է, օրինակի համար, Ուայլտի Յոքանտանին շաշող պատգամը կամ «Թայխսի» Պախմոսին գերերկրային քարոզութիւնը, իսկ իշխանուհին ոամիկի մը պես կխոսի. ո՞ւր տեսնվեր է ազնվական տոհմեկին մը, որ ինքզինքին համար ըսեր. «Ծս պառավ կնիկ մըն եմ», ասիկա գոեհիկ է։

Վերջացնելու համար, տիկնայք և տիարք, մեկ կողմ առնելով մեկ-երկու ավելորդ մասեր՝ առաջին տեսարանին սկզբի մասը և վերջիններեն մին, մեկ կողմ դնելով իշխանուհվույն տիպարը, իբր տկար արտահայտութիւն, նաև լեզվական թերին, իմ ըմբռնումով, Շանթի գործն աննախընթաց է մեր մեջ իբր symbotigue գործ, արգավանդ է մտածումներով, լավ դաշնավորված բեմական պատկերներու համադրութեամբ։ «Հին աստվածները» պատվարեր է հայ գրականութեան և հեղինակին։